# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
# « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ
# ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

20-ը հոկտեմբերի 2017թ.
ժամը 12⁰⁰

Մասնակցում էին՝

**Գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ.Գասպարյան(ԳԱՊ),

ՀՀ ՊՆԱ ՎՏ վարչության պետի ՊԺԿԼ.Խաչատրյան,

ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի թիկունքային ապահովման վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔԾԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ռուստյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Ա.Նիկոյան

ՀՀ ՊՆ իրավաքանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրոտյան

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔԾԾ 2-րդ դասի առաջատար ծառայող Տ.Աբրահամյան:

***« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

(Տ.Աբրահամյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Տ.Աբրահամյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար « գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի » ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/8» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «Սմարթլայն» ՍՊԸ |
| 2 | « ՇՏԱՄՊ-Ն.Մ.Ռ » ՍՊԸ |
| 3 | «Սաքի» ՍՊԸ |
| 4 | «Տեխնիկա Պլյուս» ՓԲԸ |
| 5 | «Անտարես» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Տ.Աբրահամյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են, բացառությամբ՝

-Տեխնիկա Պլյուս ՓԲԸ-ի, որի ներկայացրած էլեկտրոնային հայտում բացակայում է հայտի ապահովման մաս կազմող վճարման պահանջագիրը, ուստի գնահատող հանձնաժողովի որոշմամբ վերջինիս հայտը մերժվեց:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են « ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ ներքոհիշյալ մասնակիցների՝

-Անտարես ՍՊԸ-ի կողմից ներկայացրած էլեկտրոնային հայտի հավելված 10-ում վճարման պահանջագրում ամսաթիվ ու հերթական համար է դրված, ուստի գնահատող հանձնաժողովի որոշմամբ վերջինիս հայտը մերժվեց,

-«ՇՏԱՄՊ-Ն.Մ.Ռ » ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկում սխալ է գրված ապրանքի ինքնարժեքը, ուստի գնահատող հանձնաժողովի որոշմամբ վերջինիս հայտը մերժվեց:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

(Տ.Աբրահամյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.Տես հավելված 1:

Հավելված 1

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Չ/Մ | Քանակը | Նախահաշվային Գումար | 1-ին տեղ զբաղեցրած կազմակերպություն | | | Մրցույթին մասնակցող այլ կազմակերպությունների | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Անվանումը | գինը | | Անվանումները | գինը | |
| | | | | | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով |
| 1 | Թուղթ պատճենահանման | հատ | 22643 | 158501 | ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ | | | Սաքի ՍՊԸ | 188000 | 225600 |
| | | | | | | | | Սմարթլայն ՍՊԸ | 141518.75 | 169822.5 |
| 2 | Սնեղ | հատ | 298 | 38740 | Սաքի ՍՊԸ | 29800 | 35760 | Սաքի ՍՊԸ | 29800 | 35760 |
| 3 | Թել | հատ | 600 | 510000 | Սաքի ՍՊԸ | 388500 | 466200 | Սաքի ՍՊԸ | 388500 | 466200 |
| | | | | | | | | Սմարթլայն ՍՊԸ | 410000 | 492000 |
| 4 | Տուշ | հատ | 880 | 528000 | Սաքի ՍՊԸ | 396000 | 475200 | Սաքի ՍՊԸ | 396000 | 475200 |
| | | | | | | | | Սմարթլայն ՍՊԸ | 418000 | 501600 |
| 5 | Թուղթ (Regina blanc antigue) 120 գր.70X100 սմ | հատ | 1000 | 270000 | ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ | | | Սաքի ՍՊԸ | 500000 | 600000 |
| | | | | | | | | Անտարես ՍՊԸ | 225000 | 270000 |
| 6 | Մետաղական կնիքներ | հատ | 260 | 1040000 | ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՉՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ | | | Տեխնիկա Պլյուս ՓԲԸ | 1001000 | 1001000 |

3.2 Մասնակիցների գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են պատվիրատուի տվյալ գնումն իրականացնելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.6 կետի 1-ին ենթակետը, գների նվազեցման նպատակով 31.10.2017թ. ժամը 11:00-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) հրավիրվել են բանակցություններ, սակայն մասնակիցներից ոչ մեկ չի ներկայացել բանակցությունների, ուստի գնահատող հանձնաժողովի որոշմամբ վերը նշված չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարվեց չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա « ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

---

(Տ.Աբրահամյան)

4.1 07.11.2017թ.. «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինների՝ 1-ին տեղ զբաղեցնող են ճանաչվել հետևյալ մասնակիցները՝ տես Հավելված 1:

1-ին, 5-րդ և 6-րդ չափաբաժիններով «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգը չի կայացել համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին 1-ին կետի (հայտերից ոչ մեկ չի համապատասխանում հրավերի պայմաններին):

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին և հաջորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

---

(Տ.Աբրահամյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Տ.Աբրահամյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/8» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից ամփոփման վերջնաժամկետի օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| **Գնահատող** | **Վ.Գասպարյան** |
| **Գնահատող** | **Լ.Խաչատրյան** |
| **Գնահատող** | **Գ.Ռատյան** |
| **Գնահատող** | **Ս.Նիկոյան** |
| **Գնահատող** | **Կ.Բրոտյան** |
| **Գնումները համակարգող՝** | **Տ.Աբրահամյան** |

07.11.2017